

Հարկ եղաւ վերջապէս, որ տիեզերքը սարսռայ թիւրքական անլուր խժովութիւններէ երեսից, որպէսզի երեք մեծ պետութիւններէ — Ֆրանսայի, Անգլիայի եւ Ռուսիայի միացեալ ծովային ուժերը Նաւարինի ծովախորշում թիւրքական նաւատորմիղը խորտակեն եւ նրա հետ Յունաստանը կաշկանդող սարկութեան շղթաները սիւրեն:

Այնուհետեւ վերստին մոռացումն. եւրոպական մայրաքաղաքների սալոններում թիւրքերը — դիւանագէտներ ու դեսպանատան պաշտօնեաներ — ընդունուած են եւ bien gentils” ինչպէս շաղկարտում են տիկիները: Քիոս, Միսսօլունգի, Պելեպոնեզ անունները մաշում են. մինչեւ որ 1870-ական թուականներին Բուլղարիայից նոր սարսափների ահազանդը հնչի մարդկութեան խղճմտանքը դարթեցնելու. դարձեալ դիւղեր ու քաղաքներ արիւնի ու մոխրի մէջ նստած, դարձեալ սարսեցուցիչ տեսարաններ թիւրքական զազանութիւնների. ապա վերյուշեր մօտիկ ու հեռաւոր մղձաւանջների, նոյնանման ջարդերի ու տեւրի միշտ թիւրքերի ձեռքով, մինչեւ որ ռուսական յաղթական սուսերը կարողանայ Բուլղարիան շորթել օսմանների ապականիչ ու բարբարոս տիրապետութիւնից:

Ազատուեց Բուլղարիան եւ դրանով ասես Հայաստանը կաշկանդող շղթաներն աւելի եւս կուռ ու պիղկ դարձան. իրաւունք ունէր հեծեծալ Գամառ-Քաթիպա՝

«Սլաւոնի ձեռքէն թափվիւած շղթան  
«Քեզ պինդ կը կապէ, խղճով Հայաստան»:

Եւ երբ անցեալ դարի վերջերին Հայաստանը բարձրացաւ իր աւերակներից և իր միացող վէրքերը քացեց աշխարհի առջեւ մի հէքեաթային ուրուականի երեւոյթ ունէր, որ չզիտես ինչո՞ւ եկած էր քաղաքակիրթ մարդկութեան հանդիստը խոռվելու:

Մոռացուած էին օտոտմանեան հորդանների հին ու նոր արիւնոտ շահատակութիւնները. մոռացուած էին քաղաքակրթութիւնների անդարմանելի աւերը, բալկանեան սլաւոնների եւ յոյների կրած խժովութիւնները. Միսսօլունգին հէքեաթ էր. Բայրընի մահը՝ կենսազրա-

կան արկած. Վ. Հիւզոյի Orientales-ը չէին կարդում:

Քոսն տարուան ընթացքում — բուլղարական սարսափներից մինչեւ հայկական սարսափները — թիւրքը ոսկի փոշի էր ցանել շատ յիշողութիւնների վրայ. քոլոր երկրներում Պ. Լօտիներ կային թիւրքական bonhomie-ն ու աղնուութիւնը, ասպետականութիւնն ու անկեղծութիւնը հակադրելու քրիստոնեաների «ընչաքաղցութեան ու գիշատիչ հակումներին(!):

Յաճախ պատմութիւնն այսպէս է գրում. եւ դիւանագէտներ կային, Հանօտօներ, որոնք Դիլրայէլի պէս օտոտմանեան կայսրութեան ամբողջութեան մէջ տեսնում էին քաղաքակրթութեան բախտը:

Հարկ եղաւ, որ մի սուլթան — եւ ամենէն զազանբարոն — իր նախորդների օրինակով հուր ու սրի մատնի Հայաստանը, երեք հարիւր հազար հայ խողխողի հայկական լեռնաստանում, որպէսզի աշխարհը պահ մի սարսռայ եւ Վ. Հիւզոյի կրակէ խօսքերը վերստին կեանք ու կերպարանք ստանան՝

“Tout est ruine et deuil,  
“Les Turcs ont passe’ par la...”

Ապա քոլոր քաղաքակիրթ երկրներում բողոք ու ցասումի աղաղակներ. դիւանագիտական ծածուկ ու բաց իրարանցումն, մերթ պատրիչ, մերթ անկեղծ զայրոյթի ճառեր, եւ ի վերջոյ անօգնական մնացած արիւնաքամ ցեղը վերստին ծունկի եկաւ իր դահճ կարմիր սուլթանի առաջ:

Եւրոպայում այն ժամանակ կատարում էր ճիշդ նոյն պրոպագանդը, ինչ որ այսօր ի նպաստ թիւրքիայի. մարդկային ընչաքաղցութիւնը եւ յիմարութիւնը ձեռք ձեռքի տուած թիւրք ցեղի առաքինութիւնները ներբողելու, մինչեւ որ վրայ հասան Երիտ. Թիւրքերը իրենց եւրոպական հովերով:

Սուլթանները Թանգիմաթներով ու Խաթթը-Հիւմայիներով էին խաբել աշխարհը, Երիտ. Թիւրքերն աւելի վարպետ, եւ աւելի նենդ քան սուլթանները, Եւրոպային հրամցուցին ամենապիտան դեղազնոյթը:

Սահմանադրութիւն, եւրոպական իմաստով եւ ազատամիտ ոգւով: